

Սակայն ազնիւ պարոններ եւ շնորհալի տիկնայք, վերջին թոյլտուութիւն մըն ալ ըրէք ինձ, որ ձեզ կարդամ քանի մը հատուածներ իր սիրային մէկ չքնաղ քերթուածէն, որուն խորագիրն է *Աստարտէ՛*։

*...Եւ այժմ ահաասիկ միակ խորհուրդս ես դուն այլեւս,
Դուն առաջին իմ մըտածումն, երբ արշալոյս կը կոչէ զիս,
Վերջին դուն պատկեր, երբ խոնջ աչերս փակուին ի նինջ,
Եւ այժմ մատիդ, եթէ դըպչի յանըզգաստից ծայրը մատիս։
Թէ անխոհեմ հովը սըփռէ մազերուդ խունկը դէպ իմ կողմն,
Կամ պարեգօտդ, անցած ատենզ գրգռուէ թեթեւ իմ հանդերձս,
Ամբոխելով կ'ալեծըփի յայնժամ հոգիս ծայրածաւալ,
Եւ գոգցես իմն յիս կոհակդ հըրահոսան կը թաւալին,
Սըրտիս կը զգամ շիջանիլն եւ նըւաղիլն իմ աչքերուս։
Կը կարծես զքեզ փառապանծ իշխանուհի մը սիգաքայլ,
Որուն առջեւ կը խոնարհի ամէն գըլուիս պատկառանքով։
...Ասանկ, թըշուառագոյն արարածն եմ աշխարհի վրայ,
Կը հաւատա՞ն, կ'անձկամ ըլլալ ապարանաջանն որ կը փարի
Քու արմուկիդ փափկագոյն քան զամենայն որ է փափուկ։
Կ'ուզեմ ըլլալ այն շըղարշն որ կը ծածկէ ռեհան մազերդ
Յօղաթորմ" տակաւին լոգարանին ծըփանքներէն։
Կ'անձկամ ըլլալ այն բահուանդն որ կը կապէ ոտքըդ քընքուշ,
Մանկան ոտք որ գոգցես կը կոխեն վրայ լոյս ամպերու։
...Ահ, թէ վայրկեան մ'ընկղմէի մէջ մազերուդ ովկիանուն,
Թէ ներէիր ինձ համբուրել անոր ալիքն մըշկահոտ,
Թէ թոյլ տայիր ակընթարթ մը լոկ մոռնալ իմ էութիւնս,
Կը թուի ինձ, վըսե՛մ աղջիկ, թէ գորովեր պիտի Աստուած,
Եւ զի սէր է նա բովանդակ, պիտի հաճէր իմ գորովիս
Եւ հըրաման պիտի տար որ ադամանդ դառնային
Հարիւր իր աստղերուն եւ իջնէին պըճնել զքեզ...*

Որքան պարզ ու քաղցր է այս հոգին՝ պէշիկթաշլե-
անական մեծվայելչութեամբ այս քերթուածին մէջ, եւ
որքա՛ն ճշմարիտ է իր սէրը։ Ե՛րբ սէրը, եւ ո՛ր զգացումը
ճշմարիտ չէ այս մանկական եւ այրական սիրտին մէջ որ